ՔՐՈՆՈՏՈՊԸ ՈՐՊԵՍ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԸՆԿԱԼՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՄԻՋՈՑ

ՄԱՐՏԻՆ ԳԻԼԱՎՅԱՆ (Հայաստան)
բ. գ. դ., պրոֆեսոր
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Վ. Պարտիզունու անվան հայ նոր եւ նորագույն գրականության եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

Բանալի բառեր – ժամանակ, տարածություն, միասնություն, քրոնոտոպ, սյուժե, ֆաբուլա, բովանդակություն, ձեւ, ֆունկցիա:

Key words: time, area, unity, chronotope, sujet, plot, fabula, content, form, function.

Հոդվածում քննարկվում է ժամանակի եւ տարածության միասնության (քրոնոտոպ) կարեւոր նշանակությունը գրողի կողմից պատմության հայեցակարգի ընկալման, աշխարհայացքի բացահայտման, ժամանակ-անհատ, ժամանակ-հասարակություն, հասարակություն-անհատ կապերի վերաբերյալ պատկերացումների ամբողջացման գործընթացում: Մասնավորապես նշվում է, որ հատկապես վեպի ժանրում գրողը հաջողության կարող է հասնել միայն ժամանակի ու պատմության ֆունկցիան ճշգրիտ ընկալելու պարագայում:

Սկսած Լեսսինգից՝ գրականագիտական միտքն արձանագրում է, որ գրողի, հատկապես պատմավիպասանի համար անչափ կարեւոր է ժամանակի սրված զգացողությունը, որովհետեւ իրականության արտացոլումը գրականության մեջ անհրաժեշտաբար կապվում է ժամանակի ու տարածության պատկերացումների հետ, ասել է թե՝ կենսական իրողությունները դրսեւորվում են տարածաժամանակային որոշակի սահմաններում, ինչը, սակայն, չի նշանակում, թե ժամանակի գեղարվեստական արտացոլումը իրականության ժամանակային ընթացքի պարզ վերարտադրությունն է[1]:

Ի՞նչ է սա նշանակում, նշանակում է, որ գրողը ոչ թե մեխանիկորեն արձանագրում է կոնկրետ ժամանակամիջոցում տեղի ունեցած կամ

[1] **Ջրբաշյան Էդ.**, Գրականության տեսություն, Եր., «Սովետական գրող», 1980, էջ 117:

տեղի ունեցող դեպքերն ու իրադարձությունները, այլ փորձում է ներկայացնել ժամանակի շարժընթացի իր հայեցողությունը, առաջադրում է ժամանակի ֆունկցիայի ընկալման, տարածության հետ նրա միասնության փիլիսոփայական իր ելակետը:

Գրողը կա՛մ իր ժամանակի դեպքերին, իրողություններին, հասարակական-քաղաքական զարգացումների համապատկերում անհատի մտահոգություններին, դրամատիկ ապրումներին, ուրախությանն ու տխրությանն է անդրադառնում, կա՛մ պատմական անցյալին: Վերջին դեպքում կարեւոր է, թե վեպը ե՞րբ է գրվում, ո՞ր ժամանակի դեպքերին է անդրադառնում, այդ դեպքերը որտե՞ղ են ծավալվում եւ ինչքանով են կապված գրողի ապրած ժամանակի հետ:

Ուստի՝ բոլոր պարագաներում «ժամանակի զգացողությունը կարեւոր է այն առումով, որ գեղարվեստական վերացություն չէ, այլ կեցության անհրաժեշտություն. ի՞նչ ենք ժառանգել անցյալից եւ ի՞նչ ենք ստեղծում՝ գոյության իմաստն է սա եւ ստուգում է նաեւ անհատի քաղաքական հետագիծը հասարակություն, պետություն, հայրենիք հասկացություններում»[2]:

Գրականագիտական միտքն առանձնացնում է ժամանակի «ներփակ» եւ «բաց» եզրույթները. «գեղարվեստական ժամանակը «ներփակ» է կոչվում, երբ համընկնում է պատմական ժամանակի հետ եւ ներկայացնում է բնական ընթացքով իրար հաջորդող իրադարձությունների շղթա: Սա առանձնապես ակնառու է դրսեւորվում գրողի ապրած ժամանակաշրջանը պատկերող վեպերում, որոնց մեջ դեպքերը ծավալվում են առանց ժամանակային հաջորդականության խախտման, այնպես, ինչպես տեղի են ունենում: Կրկնենք, սակայն, սա չի նշանակում, թե գրողը մեխանիկորեն արձանագրում է տեղի ունեցող դեպքերը ժամանակի «ներփակ» սահմաններում. «Ես ազնիվ եմ համարում իրականի, վավերագրականի, քո տեղի, քո ժամանակի վրա սեւեռվելը: Սեւեռվես քո տեղի եւ քո ժամանակի մեջ, տեսնես բոլոր ժամանակներն ու ամբողջ աշխարհը: Հայ գրականությունը ընդգծվում է ինքնահատուկ մի ալտրուիզմով: Սա մի երկրի եւ մի ժողովրդի ծնած գրականություն է, որ հավերժորեն ասպատակվել է, անիրավվել, տրոհվել: Մեր ազգի յուրա-

[2] **Սարինյան Ս.**, Գեղարվեստական գրականության պատմականությունը, Եր., 1979, էջ 292:

քանչյուր զավակ ցավ ունի, եւ թվում է՝ մենք պետք է դառնայինք չար ուժը Աստծո դրախտում: Սակայն տեսեք, թե ցավով ծանրաբեռն մեր մեծ անունները ինչպիսի հոժարությամբ են ստանձնում տիեզերքի ցավը, ինչպես համերաշխ են մարդկության ցավը կիսելիս»[3]:

Ժամանակի «բաց» կատեգորիան համադրում կամ հակադրում է ժամանակի տարբեր հոսքերը (անցյալ-ներկա-ապագա), որոնք միասնական են դարձնում շղթան՝ միաձուլելով նրա օղակները. անցյալը որոշակի հետագծով շարունակվում է ներկայում, ներկան արտացոլում է ապագայի տեսլականը: Բերենք մի օրինակ Ս. Խանզադյանի «Մխիթար Սպարապետ» վեպից, որտեղ գործողությունները զարգանում են ժամանակի տարբեր չափումներում՝ ներկայացնելով ամենատարբեր իրավիճակներ, ամբողջացնելով ժամանակի տարեգրությունը: Թե՛ Դավիթ Բեկը եւ թե՛ Մխիթար Սպարապետը տարբեր առիթներով ճանապարհորդում են ժամանակի տարբեր չափումներում. մի դեպքում անցյալում են, մի դեպքում ներկայում, մի այլ պարագայում՝ ապագայում: Պատմական անցյալը ոգեշնչում, ոգեպնդում է Դավիթ Բեկին, ներկան թեպետ խաղաղ չէ, բայց հուսադրող է: Ներկայում նա տեսնում է ապագայի ուրվագիծը: Բնութագրական է նրա զրույցը Մովսես աբեղայի հետ. «Փոթորիկը կանցնի, Մովսես: Շատ փոթորիկներ են անցել հայ ժողովրդի գլխով: Այս էլ կանցնի: Ես հավատում եմ մեր ժողովրդի վաղվա օրվան: Մենք քեզ հետ բաց կանենք Գրիգոր Տաթեւացու դպրոցը, որ հիմնադրել է նրա ուսուցիչ Հովհան Որոտնեցին, որ խափանված է սակայն մեր աշխարհի ու մեր թշնամիների ձեռքով: Մեր հայրենակիցները հեռավոր աշխարհում գրքեր են տպագրում: Նրանց կբերենք մեր լեռները: Կնորոգենք խափանած դպրոցը ու քեզ հետ միասին լույս տվող մի փոքր օջախ կհիմնենք մեր մթամած լեռներում[4]: Միայն սուրը չէ, որ ամուր է պահում ժողովրդի ոգին: Լույսն է առաջին հերթին նրա ուժը: Որքան լուսավոր լինի ժողովրդի միտքը, այնքան հզոր կլինի նա[5]: Ժամանակի տարբեր չափումներում է ամբողջանում նաեւ Մխիթար Սպարապետի կերպարը: Վերջինս Դավիթ Բեկից ժառանգել է ժամանակի սրված

---

[3] **Մաթեւոսյան Հր**., Ես ես եմ, Եր., 2003, էջ 368:
[4] **Խանզադյան Ս**., Երկերի ժողովածու, հ. 2, Եր., 1981, էջ 140:
[5] **Նույն տեղում**, էջ 138:

զգացողություն եւ կարողանում է ձեռքը պահել նրա զարկերակին, զգալ նրա մերթ հանդարտ, մերթ անհանգիստ տրոփյունը:

Ռուսական գրականագիտական միտքը վերջին շրջանում ժամանակի «ներփակ» եւ «բաց» կատեգորիաներին զուգահեռ օգտագործում է նաեւ նրա «գծային» եւ «ցիկլային» եզրույթները: «Գծային» կատեգորիան ներկայացնում է ժամանակի ավելի սեղմ հատվածներ (ծնունդ, մանկություն, պատանեկություն, հասունացում), որոնք հիմնականում դրսեւորվում են ինքնակենսագրական վեպերում, «ցիկլային» կատեգորիան անդրադառնում է ժամանակի ավելի ընդգրկուն հատվածների, որոնք յուրահատուկ են պատմավեպերին (ազատագրական պայքարի առանձին շրջափուլեր, հեղափոխություններ եւ այլն): Շատ հաճախ «գծային» եւ «ցիկլային» ժամանակահատվածները մի որոշակի տեղում միաձուլվում են, ամբողջացնում ժամանակի համապատկերը:

Ժամանակն ու տարածությունը վիպական կառույցներում միշտ հանդես են գալիս սերտ միասնությամբ:

Դեռեւս Լեսսինգն էր գրում, որ «առարկաները գոյություն ունեն ոչ միայն ժամանակի, այլեւ տարածության մեջ: Նրանց գոյությունը ձգվում է, եւ իրենց լինելիության յուրաքանչյուր ակնթարթին նրանք կարող են հանդես գալ այս կամ այն տեսքով կամ դրսեւորումներով»[6]:

Ժամանակի ու տարածության փոխադարձ կապը Մ. Բախտինը անվանում է քրոնոտոպ, որը «իր մեջ ներառում է գեղարվեստական երկի ոչ միայն բովանդակային, այլեւ ձեւակառուցվածքային կողմերը, թեեւ առաջին հայացքից թվում է՝ գեղարվեստական երկի ձեւաստեղծման խնդիրը չի առնչվում վերջինիս»[7]:

Նորից անդրադառնանք Ս. Խանզադյանին. ժամանակի ու տարածության միասնությունը ընդգծված կերպով երեւում է «Թագուհին հայոց» վեպում, որտեղ գործողությունները ծավալվում են «մի առասպելական, բայց իրական աշխարհում, նախապատմական ժամանակներում, Սեւ ծովի, Եփրատի, Հայկական Տավրոսի, Վանա լճի միջեւ եղած Հայասա անունով երկրում, որի մասին հիշատակում են քրիստոնեությունից առաջ 15-12-րդ դարերի խեթական արձանագրությունները»[8]:

---

[6] **Лессинг**, Лаокоон, или о границах живописи и поэзии, М., 1933, с. 111:
[7] **Бахтин М.**, Вопросы литературы и эстетики, М., 1975, с. 391.
[8] **Խանզադյան Ս.**, Երկերի ժողովածու, հ. 5, Եր., 1983, էջ 458:

Վեպում հանդիպադրվում են տարբեր ժամանակահատվածներ՝ Հայասա պետության հիմնաքարերը դնող Նարամսինի տիրակալությունից մինչեւ Մարի-Լույսի կողմից բազմաստվածության վերացում: Աշխարհագրական տարբեր հարթություններում ծավալվող գործողությունների միջոցով, որոնք տեղի են ունենում ժամանակի տարբեր չափումներում, գրողը լուծում է բարդ խնդիր. բացահայտում է պատմության ընկալման իր հայեցակարգը, գտնում է պատմության գիտական ու գեղարվեստական մոդելի իր յուրահատուկ սինթեզը:

Ավելացնենք, որ տարածությունը մշապես նպաստում է կերպարների հոգեկերտվածքի, անհատականության ձեւավորմանը: Յուրաքանչյուր կերպար իր ժամանակի ծնունդն է, կոնկրետ տարածական հարթության վրա, նրա վարքագիծը, աշխարհայեցությունը խտացնում են կոնկրետ ժամանակի բնորոշ յուրահատկությունները:

Ամփոփենք Մ. Շահինյանի՝ ժամանակի ինքնատիպ բնութագրումով. «Ժամանակը սովորաբար մենք պատկերացնում ենք անցյալից ապագա ձգվող վերընթաց ուղու տեսքով, մի տեսակ՝ հետեւից դեպի առաջ, մինչդեռ այն նման է բաժակի, որի մեջ անընդհատ լցվում է ջուրը: Այսինքն՝ մենք՝ մարդիկ, ժողովուրդները այդ բաժակի մեջ ենք, եւ ժամանակը հավիտենական թափվում է մեզ վրա: Կա ներկա, որի մեջ խտացված են մեր անցյալն ու ապագան»[9]:

SUMMARY

CHRONOTOPE AS AN IMPORTANT DETAIL FOR PERCEPTION OF CONCEPT OF HISTORY

Martin Gilavyan

In the article author dicusses the main role of chronotope in writer's perception of history. It connects also with revelation of his worldview, which completes with understanding of relations time and person, time and society, society and person. Especially emphasizes that writer can suceed in the novel genre when he recognizes function of time and history.

[9] «**Գրական թերթ**», Եր., 1997, 15 ապրիլի, երեքշաբթի: